ռելի որդիների արիւնոտ կռիւը, որի մէջ այնքան շատ սպանեցին նրանք եւ սպանուեցան...

Նոյն միջոցին վարագոյրի հետքից, որ բաժանում էր մեզանից կանանոցը, լսելի եղան դառն հեկեկանքի ձայներ: Մի աղախին դուրս եկաւ այնտեղից, եւ մօտենալով բեկին, ասաց. «տիկինը խնդրում է, որ այս երգը չերգեն»:

Ո՞վ էր տիկինը: — Դա նոյն տղամարդի ամուսինն էր, որի քաջագործութիւններն էր երգում աշուղը, եւ որը սպանուած էր...

Ճշմարիտն ասած, ինձ վրայ եւս խիստ դառն տպաւորութիւն գործեցին վիպասանի խօսքերը, որոնք ազդում էին կորով եւ ցաւակցութիւն:

Երեւի ինքն բեկն եւս ուրախ տրամադրութեան մէջ չէր. նա մեզանից ներողութիւն խնդրեց եւ գնաց քնելու: Նրա գնալուց յետոյ երգիչը նոյնպէս հեռացաւ: Այնուհետեւ Ասլանը ինձ պատմեց, թէ այս անցքը պատճառ էր տուել եղիդիների ցեղի տոհմային ոխակալութեանը մի ուրիշ ցեղի հետ, որ Վանայ նահանգում նշանաւոր է իր վայրենի բարբարոսութեամբ, որոնց ձեռքում այնքան տանջուած են հայերը...

Այս լսելուց յետոյ ես մասամբ հասկացայ Ասլանի եզիդիների բէկի մօտ գալու նպատակը, հասկացայ նաեւ, թէ ինչ խորհուրդ ունէր Կարօյի նամակի մէջ այն մասը, որով առաջարկում էր ծերունի որսորդին եզիդիների բէկի մօտ գնալ, եւ նա ստանալով նամակը, էլ չսպասեց, գիշերով ճանապարհ ընկաւ: Դա մի քանի շաբաթ առաջ էր եւ նամակը մի դիպուածով իմ ձեռքը ընկաւ...

Մեզ համար եւս անկողին պատրաստեցին քնելու: Բայց Ասլանը երկար նստեց. նա պատրաստում էր մի քանի նամակներ, որ վաղ առաւօտեան պէտք է Մըհէն տանէ: Նա ինձ չասաց, թէ ումն է գրում նամակները եւ ոչ ես համարձակութիւն ունեցայ հարցնելու, միայն նկատեցի, թէ խեղճ Մըհէն այնպէս վիրաւոր, որպէ՛ս կարող էր ճանապարհ գնալ:

— Կը գնայ, — ասաց նա, — այնպիսի վէրքերը Մըհէի համար նշանակութիւն չունեն:

Որքա՜ն անգութ են այս մարդիկը... մտածում էի ես:

Ես սպասել չկարողացայ, մինչեւ Ասլանը վերջացնէր իր գրութիւնները. հէնց գլուխս դրի բարձի վրայ, քունս տարաւ: Բայց երբ աչքս ընկաւ նրա նամակներից մէկի վրայ, տեսայ, նրա գրածքը ոչ մի ազգի տառերի չէին նմանում, կարծես դա մի առանձին հնարած գիր լինէր, որի գաղտնիքը միայն գրողին եւ ստացողին էր յայտնի...